Համբոյրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին

Կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

2. ՍԻՐԵՐԳ

Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագի՛ն,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագի՛ն...

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
Համբոյր՝ լոյսէն, որ չորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի՛,
Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

Բայց լոյս իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի՛,
Շրթունքս են ծարաւ միակ համբոյրին...
Ցնծագին գիշերն է լոյս ու լուսին՝
Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի...

3. ԿԱՅԾԵՐ

Հոգւոյս դափ ու թմբուկի
Կ'իջնէ ծիծաղն այս գիշեր.
Ծնծղաներու պէս ցնծուն՝
Ծափ կը զարնեն իմ յուշեր:

Բամբիռներու երգին հետ
Քու շահէնի աչքերուդ
Ծիրանեծին բոցն հըրուտ
Կ'այրի հոգւոյս մէջ նորէն:

Գինով՝ աննիւթ նեկտարէն
Համբոյրներուն ծաղկանոյշ՝
Հոն խօլաբար կը պարեն
Շարժուձեւեր բամբիշի 1[1]: